## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ և Նոր Կեսարիա բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/76 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/76 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Համադրման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել նախատեսված աշխատանքների ծավալների և գնի նվազեցում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «Արթ Վարդ» ՍՊԸ-«Նարսեր Շին» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2024 թվականի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Պայմանագրի 5.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 5,160,000.00 (հինգ միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 860,000.00 (ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:
2. Պայմանագրի շրջանակում նոյեմբերի 28-ին կնքված Համաձայնագիր 1-ի «1. Համաձայնագրի առարկան» մասի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված աշխատանքների ձեռքբերման համար հատկացված 5,160,000.00 (հինգ միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 860,000.00 (ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.»:
3. Պայմանագրի Հավելված 1-ով ներկայացված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» աղյուսակի «Գումար» սյունակի «5,160,000.00» թիվը փոփոխել «4,720,763.28»:
4. Պայմանագրի Հավելված 1-ով ներկայացված «ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ»-ը փոփոխել և հաստատել համաձայն կից ներկայացվող Հավելված 1-ի:

Պայմանագրի շրջանակում նոյեմբերի 28-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 3 – ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը փոփոխել և հաստատել ըստ կից ներկայացված Հավելված 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2023 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/76 ծածկագրով պայմանագրի կատարման շրջանակում համադրման արդյունքում կատարվող աշխատանքների և ծավալների նվազեցման անհրաժեշտությունը և Պայմանագրի 8.5 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**